DOI: 10.61760/18290108- tab.25.3-112

ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՄԻՋԻՆԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ*

Ռ. Ա. ՑԱԿԱՆՅԱՆ, պատմագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող

1. **Ներածություն**

Ասորեստանի պատմության Միջինասորեստանյան ժամանակաշրջանը (Ք. ա. մոտ 1416–935 թթ.[1]) որոշիչ փուլ էր Հին Մերձավոր Արևելքի ռազմական պատմության համար: Հինասորեստանյան «*առևտրացանցային*» պետության անկումից հետո Ասորեստանն ընկղմվեց հասարակական ու քաղաքական մասնատվածության շրջան, որից կարողացավ դուրս գալ միայն Միջինասորեստանյան ժամանակաշրջանում[2]: Իր յուրահատուկ ռազմական կազմակերպությամբ ու մարտավարությամբ Ասորեստանն այս ժամանակահատվածում քաղաք-պետությունից վերածվեց տարածաշրջանային տերության:

Ասորեստանի պատմության Միջինասորեստանյան ժամանակաշրջանն սկիզբ առավ Աշշուր-բել-նիշեշուի (Ք. ա. մոտ 1416–1408 թթ.) կառավարման ժամանակահատվածում, երբ վերականգնվեցին միտաննացիների ավերած Աշշուր քաղաքի պաշտպանական պարիսպները և Կասսիտական Բաբելոնիայի ու Եգիպտոսի հետ կարգավորվեցին միջպետական հարաբերությունները[3]: Աշշուր-ուբալլիտ I-ի (Ք. ա. մոտ 1362–1327 թթ.) կառավարման ընթացքում Աշշուրը ոչ միայն դուրս եկավ իր սահմաններից և անցավ հարձակման, այլև սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին[4]:

---

* Հոդվածն ստացվել է 25.06.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 08.08.2025:

[1] Այդ մասին հանգամանորեն տես *Ռ. Ա. Ցականյան*, Աշշուրի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերը: ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023, հ. 26, հմ, 2, էջ 15- 18:

[2] Տես նույն տեղում, էջ 10- 11:

[3] Տես *Ռ. Ցականյան*, Քաղաքական և դիվանագիտական հարաբերությունները Աշշուրի և Խաթթիի միջև մ. թ. ա. XIV-XIII դարերում: «Լրաբեր հասարակական գիտությունների», 2024, հմ. 2, *նույնի*՝ Աշշուրի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից ..., էջ 16, *Ռ. Ցականյան*, Միջինասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ: «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 2018, հմ. XXXI:

[4] Տես *E. Frahm*. Assyria: The Rise and Fall of the World's First Empire. New York, 2023, P. 61ff.; *H. Reculeau*. Assyria in the Late Bronze Age. "The Oxford History of the Ancient Near East". Ed. by K. Radner, N. Moeller and D. T. Potts, Vol. 3: "From the

Ասորեստանը, Աշշուր-ուբալլիտ I-ի հաջորդների և մասնավորապես՝ Ադադ-նիրարի I-ի (Ք. ա. մոտ 1304–1273 թթ.), Շուլմանու-աշարեդ (Սալմանասար) I-ի (Ք. ա. մոտ 1272–1243 թթ.) և Թուկուլտի–Նինուրտա I-ի (Ք. ա. մոտ 1242–1206 թթ.) կառավարման ժամանակաշրջանում հասնելով իր հզորության գագաթնակետին[5], զգալիորեն ընդլայնեց տարածքը՝ Զագրոսի լեռներից մինչև Եփրատ: Այս ընդարձակումն անխուսափելիորեն հանգեցրեց Խաթթիի, Բաբելոնիայի և տարբեր փոքր պետությունների հետ բախման: Ընդլայնված տարածքների պահպանման և պաշտպանության համար անհրաժեշտ էր փոփոխություններ կատարել ռազմական կազմակերպման և կառավարման ոլորտում. պետք էր ձևավորել արհեստավարժ, լավ կազմակերպված բանակ, որը կարող էր իրագործել ինչպես հարձակողական մարտեր, այնպես էլ պաշտպանողական գործողություններ:

2. **Աղբյուրներն ու մեթոդաբանությունը**

Միջինասորեստանյան բանակի ու նրա կառուցվածքի վերաբերյալ մեր պատկերացումները հիմնված են մի շարք նյութական և ոչ նյութական աղբյուրների վրա.

ա) *արքայական տարեգրություններ ու արձանագրություններ*[6],

բ) *վարչական ու տնտեսական տեքստեր*[7],

գ) *հնագիտական պեղումների արդյունքներ*[8],

դ) *պատմահամեմատական մեթոդ*՝ համադրման ու հակադրման վերլուծություն[9]:

Hyksos to the Late Second Millennium BC". Oxford, 2022, P. 725ff.; *R. Koliński*. Making Mittani Assyrian. "Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire, Essays dedicated to Frans Wiggermann (PIHANS 125). Ed. by B. S. During. Leiden, 2015, P. 9f.:

[5] Տես *J. Llop*. The Creation of the Middle Assyrian Provinces. "Journal of the American Oriental Society", 2011, Vol. 131, N 4:

[6] Տես *A. K. Grayson*. Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC). The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, Vol. I. Toronto-Buffalo-London, 1987, A.0.73-A.0.86, PP. 109- 327; *նույնի*՝ Assyrian Rulers of the Third and Second Millennium BC I (1114-859 BC). The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, Vol. II. Toronto-Buffalo-London, 1991, A.0.87- A.0.97, PP. 5- 130:

[7] Տես "Die Zitadelle von Dūr-Katlimmu in mittel- und neuassyrischer Zeit". Hrs. H. Kühne. Teil. 1: Text, Teil. 2: Katalog, Teil. 3: Illustrationen. Berichte der Ausgrabung Tall Šēḫ Ḥamad/Dūr-Katlimmu 12.1. Wiesbaden, 2021; *M. H. Feldman*. Assur Tomb 45 and the Birth of the Assyrian Empire. "Bulletin of the American Schools of Oriental Research", 2007, Vol. 343, PP. 21- 43; *E. Cancik-Kirschbaum*. Die mittelassyrischen Briefe aus Tall Šēḫ Ḥamad. Vol. 4, texts, 1. Berlin, 1996:

[8] Տես *Ch. E. Watanabe*. Styles of Pictorial Narratives in Assurbanipal's Reliefs. "Critical Approaches to Ancient Near Eastern Art". Ed. by Brian A. Brown, Marian H. Feldman. Boston/Berlin, 2014, PP. 345- 367; *B. A. Brown*. Culture on Display: Representations of Ethnicity in the Art of the Late Assyrian State. "Critical Approaches to Ancient Near Eastern Art". Boston/Berlin, 2014, PP. 515- 542:

[9] Տես *T. Dezsò*. The Assyrian Army I-III: The Structure of the Neo-Assyrian Army,

3. **Բանակի կառուցվածքը և կազմը**

Միջինասորեստանյան ռազմագիտական տերմինաբանության ուսումնասիրությունը նույնպես արժեքավոր պատկերացումներ է տալիս բանակի ձևավորման, զարգացման, կառուցվածքի և գործառույթների մասին: Իրենց ռազմական հաստատությունները նկարագրելու համար ասորեստանցիների օգտագործած տեխնիկական բառապաշարը արտացոլում է ինչպես ռազմական կազմակերպության գործնական իրողությունները, այնպես էլ պատերազմի հայեցակարգային ընմբռնումը: Մասնագիտացված բառապաշարը ներառում է տերմիններ, որոնք վերաբերում են զորքերի տեսակներին, հրամանատարական կառույցներին, սպառազինությանը, ամրաշինություններին և մարտավարությանը:

3.1. **Ռազմական կենտրոնական վարչություն**

Միջինասորեստանյան բանակը գործում էր բարձր կենտրոնացված հրամանատարական կառույցի ներքո, որի գերագույն հրամանատարը արքան էր՝ **šarru(m)** (**šar māt Aššur** – *Աշշուրի արքա*): Նրա դերը շեշտված էր արքայական արձանագրություններում, որտեղ ռազմական ղեկավարությունը ներկայացվում էր որպես աստվածային մանդատ: Արքան սովորաբար անձամբ էր գլխավորում խոշոր ռազմարշավները, մի պրակտիկա, որով ընդգծվում էր ռազմական հաջողության և արքայական իշխանության միջև կապը: Ադադ-նիրարի I-ի և Թուկուլտի-Նինուրտա I-ի տարեգրություններում հաճախ ներկայացվում է արքայի անմիջական մասնակցությունը ճակատամարտին[10]:

Ռազմական գործի տարբեր բաղադրիչների ղեկավարումը գտնվում էր պալատական վարչության անդամների անմիջական վերահսկողության տակ: Բարձրաստիճան զինվորականները ինտեգրված էին կենտրոնացված վարչական համակարգին: Արքայական պալատը գործում էր որպես ռազմական կառավարման *«նյարդային կենտրոն»*, որտեղ ընդգրկված էին այն պաշտոնատար անձինք, որոնք պատասխանատու էին զորքերի հավաքագրման, մատակարարման և հետախուզության համար[11]: Հիմնական վարչական պաշտոնները ներառում էին.

ա) **sukkallu rabû** *(մեծ վեզիր)*[12]. սա արքայի՝ ռազմական գործերով

1: Infantry. Budapest, 2012; *նույնի՝* The Assyrian Army I: The Structure of the Neo-Assyrian Army. Budapest, 2012; *նույնի՝* The Assyrian Army II: Recruitment and Logistics. Budapest, 2016; *նույնի՝* The Assyrian Army III: The Assyrian Army on Campaign 1. Musters and Marching. Budapest, 2022; *նույնի՝* The Assyrian Army III: The Assyrian Army on Campaign 2. Battle Order and Tactics. Budapest, 2022:

[10] Տես *A. K. Grayson*. Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC), RIMA I, A.0.76, A.0.78:

[11] Տես *W. Mayer.* Politik und Kriegskunst der Assyrer. Münster, 1995, P. 419ff.:

[12] Տես “The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago” (այսուհետև՝ CAD), Ed. by R. D. Biggs, J. A. Brinkman, M. Civil, W. Farber, E. Reiner, M. T. Roth, M. W. Stolper. Chicago (A to Z, 1956- 2010), S, PP. 356, 358, 360:

գլխավոր տեղակալն էր, որի պաշտոնը երբեմն զբաղեցնում էին արքայական ընտանիքի անդամները[13],

բ) **turtānu** *(գլխավոր հրամանատար, դաշտային հրամանատար)*[14]. ամենաբարձր *զինվորական* պաշտոնյան, որը արքայի բացակայության ժամանակ ղեկավարում էր զորքերը: Նորասորեստանյան ժամանակաշրջանում եղել են նաև մի քանի՝ աջ և ձախ թևերի turtānu և ենթարկվել են **turtānu rabi'u**-ին *(մեծ զորահրամանատար)*[15],

գ) **rab šāqê** *(գլխավոր մատռվակ)*[16]. չնայած պաշտոնի արտաքնապես կենցաղային բնույթին ու ենթատեքստին՝ նա գործում էր որպես բարձրաստիճան զինվորական և վարչական պաշտոնյա[17]:

դ) **rab ḫurādi rabi'u** *(գլխավոր մարտիկ)*[18], որը ղեկավարում էր նորակոչիկների ստորաբաժանումը[19]:

ե) **bēl pāḫete** *(նահանգապետ)*. նահանգային մակարդակով ամենաբարձրաստիճան պաշտոնյան էր: Պատասխանատու էր նահանգային զորքերի հավաքագրման համար և արշավանքների ժամանակ ղեկավարում էր դրանք[20],

զ) **rab kiṣir** *(սպա)*. ղեկավարել է ավելի փոքր և մասնագիտացված ստորաբաժանումներ[21]:

3.2. **Ցածր հրամանատարական կազմ**

Միջինասորեստանյան բանակի ցածր սպայական կազմը հետևյալ տեսքն ուներ՝

ա) rab ešerte (ṣābē – բանակ/ի)[22]՝ *գասնապետ*[23],

---

[13] Տես *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen. Leiden, 2003, P. 55ff.; *J. N. Postgate*. Bronze Age Bureaucracy: Writing and the Practice of Government in Assyria. Cambridge, 2013, P. 203; *Է. Քանչիկ-Կիրշբաում,* Նշ. աշխ., էջ 25- 28:

[14] Տես CAD, T, P. 489f.:

[15] Տես *S. Jakob*. Economy, Society, and Daily Life in the Middle Assyrian Period. “A Companion to Assyria”. Ed. by E. Frahm. Malden, 2017, P. 152f.; *նույնի՝* Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, P. 191ff.; *Վ. Մայեր,* Նշ. աշխ., էջ 437f.:

[16] Տես CAD, Š/2, P. 30ff.:

[17] Տես *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, P. 92ff.:

[18] Տես CAD, Ḫ, P. 244:

[19] Տես *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, P. 202- 208; *Վ. Մայեր,* Նշ. աշխ., էջ 470:

[20] Տես *J. N. Postgate*. Bronze Age Bureaucracy: Writing and the Practice of Government in Assyria, P. 375f.:

[21] Տես *J. N. Postgate*. The Organization of the Middle Assyrian Army: Some Fresh Evidence. “Les armées du Proche Orient ancien”. British Archaeological Reports, IS. 1855. Ed. by P. Abrahami, L. Battini. Oxford, 2008, PP. 83- 92:

բ) rab ḫanšê (ṣābē)՝ *հիսնապետ*[24],

գ) rab mē'ati (ṣābē)՝ *հարյուրապետ*[25],

դ) rab līmi (ṣābē)՝ *հազարապետ*[26]:

Այս սպաները ստանդարտացված ստորաբաժանումների ղեկավարներ էին և անմիջական պատասխանատվություն էին կրում մարտական պատրաստության ու կարգապահության համար:

3.3. **Բանակի կառուցվածքը**

Միջինասորեստանյան բանակը ենթարկվեց զգալի կազմակերպական փոփոխությունների, ինչի շորհիվ այն սեզոնային զինյալ աշխարհազորայիններից վերածվեց ավելի արհեստավարժ մշտական ուժի: Զինվորական ստորաբաժանումները կազմակերպվում էին տասնորդական կարգով՝ 10-ից մինչև 1000 հոգուց բաղկացած՝ յուրաքանչյուրն իր հրամանատարով, մի համակարգ, որը շարունակվելու էր մինչև Նորասորեստանյան ժամանակաշրջանը (Ք. ա. 934–609/605 թթ.): Բանակն ուներ հետևյալ կազմակերպական կառուցվածքը.

ա) ummānu *(հիմնական բանակ)*՝ հիմնական արհեստավարժ ուժը,

բ) kiṣru՝ մոտավորապես 50-100 զինվորից բաղկացած ստորաբաժանումներ,

գ) eširtu՝ մասնագիտացված զորքերի ավելի փոքր խմբավորում,

դ) ḫurādu[27]՝ բանակի հիմնական ջոկատը, սովորաբար, 10 զինվոր:

Ռազմարշավների ժամանակ Միջինասորեստանյան բանակի ընդհանուր թվաքանակը, հավանաբար, տատանվում էր 10-20 հազ. արհեստավարժ զինվորների միջև, որոնք համալրվում էին օժանդակ ուժերով:

Բանակի միջուկը բաղկացած էր մի քանի տարրերից՝

ա) *պալատական զորքեր* (**ṣāb šarri**), արքայի անմիջական հսկողության տակ գտնվող ընտրյալ ստորաբաժանումներ, որոնք կազմում էին բանակի արհեստավարժ միջուկը, կամ հիմնական զորքերը՝ ṣābū kaṣrūtu[28], և ամբողջ տարվա ծառայության դիմաց ստանում էին կանոնավոր օրապահիկներ և հողաբաժիններ: Նրանք պահպանում էին պալատը և տաճարային հաստատությունները: Այս զորքերը իրենց մեջ ներառում էին՝ 1) *պալատի պահա-*

[22] Տես CAD, Ṣ, P. 46ff.:

[23] Տես *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, PP. 28f., 200f.; CAD, E, P. 365:

[24] Տես *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, PP. 197-199, CAD Ḫ, P. 81:

[25] Տես CAD, M/2, P. 1:

[26] Տես նույն տեղում, L, P. 197:

[27] Տես նույն տեղում, Ḫ, P. 244:

[28] Տես նույն տեղում, էջ 195f.:

պանների գունդը՝ **ša qurbūti** *(«նրանք, ովքեր ներքին շրջապատից են»)*[29], հատուկ ջոկատայիններ, ընտրյալ զինվորներ, որոնք ծառայում էին որպես արքայի թիկնապահներ, 2) *արքայական կորպուսը՝* **kiṣir šarrūti**, որը բաղկացած էր ռազմական մասնագիտություն ստացած զինվորներից[30], 3) *կառամարտիկներ՝* **mārē damqūti**[31], որոնք հաճախ հավաքագրվում էին ազնվականներից կամ հարուստ ընտանիքներից:

բ) *Նահանգային թվակազմ* **(ilku)՝** մարզային տարածքներից որպես հարկային և սպասարկման պարտավորությունների մաս հավաքագրված ուժեր: Թուկուլտի-Նինուրտա Ի-ի կառավարման ժամանակաշրջանի վարչական տեքստերում մանրամասն ներկայացված են յուրաքանչյուր գավառին հատկացված մասնաբաժինները՝ մարտակառքերի, հետևակի և օգնականների մասնագիտացված ստորաբաժանումներով:

գ) *Օտարերկրյա զորաբաժինը որպես օժանդակ ուժեր*[32]*.* միջինասորեստանյան շրջանի նորամուծությունը՝ բանակում օտարերկրյա զորքերի համակարգված ընդգրկումն էր: Դրանք ներառում էին.

1) *Օժանդակ ուժեր.* ենթակա պետությունների տրամադրած կամ նոր նվաճված տարածքներից հավաքագրված զորքերը[33], որոնք կարող են ընկալվել որպես ուղղակի տուրք կամ պայմանագրային պարտավորությունների կատարում:

2) *Տեղահանվածներ.* արշավանքների հետևանքով զանգվածային տեղահանությունների և վերաբնակեցումների քաղաքականությամբ տեղափոխված բնակչության տղամարդկանց մի մասը՝ ներառված բանակում[34]:

3) *Վարձկաններ.* Ասորեստանին սահմանամերձ շրջաններում վարձված և յուրահատուկ հմտությունների ու սպառազինությանը տիրապետող մարտիկներ: Օտարերկրյա ռազմական տարրերի ներգրավման այս պրակտիկան է՛լ ավելի ընդգծված դարձավ Նորասորեստանյան ժամանակաշրջանում[35]:

Միջինասորեստանյան վարչական փաստաթղթերը նկարագրում են հավաքագրման, վերապատրաստման և մատակարարման բարդ համակար-

[29] Տես CAD, Q, P. 315ff.:

[30] Տես *S. C. Melville*. Assyrian Warfare 1550-609 BCE. “Routledge Handbook of the Global History of Warfare”. Ed. by K. Roy and M. W. Charney. London, New York, 2024, P. 71ff.:

[31] Տես CAD, D, P. 70f.:

[32] Տես *Ջ. Լոպ,* Նշ. աշխ.; *Ս. Ք. Մելվիլ,* Նշ. աշխ., էջ 71- 72:

[33] Տես *J. N. Postgate*. The Organization of the Middle Assyrian Army: Some Fresh Evidence, P. 86f.:

[34] Տես *R. A. Tsakanyan*. Tiglath-Pileser III (745-727 B.C.): Mass Deportations and Resettlements Policy in Assyria. «Բանբեր Հայագիտության», 2018, հմ. 1; *նույնի՝* Միջինասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ:

[35] Տես *Ռ. Ա. Ցականյան*, էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ.: Ե., 2018, էջ 23- 24, 45- 48:

գեր: Հատկապես ուշագրավ են անձնակազմի ցուցակները, որտեղ մանրամասն տեղեկություններ են արձանագրվում զորամասերի մասին, ներառյալ՝ թվաքանակը, տեխնիկայի հատկացումը և սննդի չափաբաժինների բաշխումը[36]:

3.4. **Մասնագիտացված զորատեսակներ**

Միջինասորեստանյան բանակում ստեղծվել են մասնագիտացված զորատեսակներ, այդ թվում՝

ա) *մարտակառքը* (**narkabtu (ṣāb narkabti)**[37], **GIŠ.GIGIR.MEŠ**, **ša ma/ugerre**)[38], որը համարվում էր բանակի ընտրյալ ստորաբաժանումը: Դրա հրամանատարը կոչվում էր **bēl narkabāti**: Մարտակառքերն առաջին անգամ հիշատակվել են ասորեստանյան արքայական արձանագրություններում՝ Արիկ-դեն-իլիի (Ք.ա. մոտ 1316-1305 թթ.) կառավարման ժամանակաշրջանում[39]: Սկզբնավորվելով որպես զինվորականների ընտրյալ ճյուղ՝ մարտակառքերի ստորաբաժանումներն այս շրջանում ձեռք են բերել ավելի ու ավելի մեծ նշանակություն[40]: Հնագիտական փաստերն ու սեպագիր տեքստերը ցույց են տալիս, որ միջինասորեստանյան մարտակառքում սովորաբար լինում էին երեք հոգի՝ կառավար (**mukil appāti**)[41], կառավահանակիր և կառամարտիկ (**mārē damqūti**)[42]: Նորասորեստանյան ժամանակաշրջանում մարտակառքի անձնակազմը կրճատվեց երկուսի: Մարտակառքերի պատրաստման հմտություններն ու դրանց մարտավարությունը մասամբ փոխառվել էին Միտաննիից: Արքայական արձանագրությունները շեշտում են մարտերում հաղթանակ տանելու գործում մարտակառքերի դերը: Միջինասորեստանյան ժամանակաշրջանում առկա էին ծանրազեն՝ ***narkabtu dannatu*** և թեթևազեն՝ ***narkabtu qallatu*** մարտակառքեր: Դրանք, փաստացի, կատարում էին տարատեսակ գործառույթներ՝ նետաձիգների համար լինելով մարտական հարթակներ, ընտրյալ զորքերի համար՝ փոխադրամիջոց, միևնույն

[36] Տես *H. Freydank*. Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte (MARV, I), VS NF III (XIX). Akademie Verlag, Berlin, 1976, N 1, 20; *նույնի՝* Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte (MARV, III). Gebr. Mann-Verlag, Berlin, 1994, N 1:

[37] Տես CAD, N/1, P. 354ff.:

[38] Տես *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, PP. 210, 217f; CAD, M/1, P. 33f.:

[39] Տես *A. K. Grayson*. Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC), RIMA I, A.0.75.8, ll. 10, 12, 23:

[40] Տես *R. Drews*. The End of the Bronze Age: Changes in Warfare and the Catastrophe ca. 1200 B.C. New Jersey, 1996, P. 104f.:

[41] Տես *Է. Քանչիկ-Կիրշբաում,* Նշ. աշխ., էջ 136f., CAD, A/2, P. 182f.:

[42] Տես *Ս. Ք. Մելվիլ,* Նշ. աշխ., էջ 72; *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, P. 211, հմմտ.՝ *Է. Քանչիկ-Կիրշբաում,* Նշ. աշխ., էջ 136f:

ժամանակ ծառայում էին որպես արքայական ու ռազմական խորհրդանիշներ: Ք. ա. 13-րդ դարի վերջի վարչական տեքստերը մանրակրկիտ կերպով նկարագրում են մարտակառքերի սպասարկման համակարգերը, որոնցում ներառված էին դրանց պատրաստման ու նորոգման համար առանձնացված մասնագետ արհեստավորներ: Արքաներն զգալի ռեսուրսներ էին հատկացնում հատուկ մարտակառքերի համար ձիերի բուծմանն ու վարժեցմանը:

բ) *Հեծելազորը* (**pētḫallu**)[43]. այս ժամանակահատվածում հեծելազորի դերի ու նշանակության վերաբերյալ չկան փաստագրված հստակ տեղեկություններ: Կարելի է պնդել անգամ, որ այն չէր համարվում զորքերի գլխավոր հարվածային ուժը[44], ինչպիսին որ մարտակառքն էր: Եվ չնայած այն ակնհայտ հանգամանքին, որը վկայում է անցման աստիճանականությունն ու հետևողականությունը, Միջինասորեստանյան ժամանակաշրջանում հեծելազորը համալրեց բանակը՝ այդուհանդերձ, մնալով սահմանափակ մարտական միավոր: Ամեն դեպքում, անհրաժեշտ է արձանագրել, որ Վաղմիջինասորեստանյան արքայական արձանագրություններում շեշտը դրված էր մարտակառքերի (*narkabtu*) և հետևակային կազմավորումների (*ṣābū*) վրա: Է. Դրյուզի կարծիքով՝ հեծելազորի օգտագործումն սկսվել է Ք. ա. 12-րդ դարում, իսկ Ք. ա. 10-րդ դարից ի հայտ են եկել հազարավոր վարձկան հեծյալներ, և միայն Ք. ա. 9-րդ դարից սկսած Նորասորեստանյան արքաներն իրենց հեծելազորում ունեցել են առնվազն նույնքան ձիեր, որքան մարտակառքային ստորաբաժանումներում[45]:

Արքայական արձանագրություններում՝ Ասորեստանի բանակում հեծելազորի կիրառման մինչ օրս հայտնի առաջին հիշատակությունը արդեն Նորասորեստանյան արքա Թուկուլտի–Նինուրտա II-ի (Ք.ա. 890–884 թթ.) ժամանակաշրջանից է՝

“37. *i-ṣa-ab-tu ina* 2-*e* u_4-*me ina* KUR-*e* KUR *iš-ru-un la-a ina* GIŠ.GIGIR.MEŠ-*a la-a pit-ḫal-li it*-(*ta*)-*bal*-[*ki*]-*t*[*u* ...]” «37. *Երկրորդ օրը, (քանի որ) Իշրուն լեռան բլուրներով հնարավոր չէր անցնել ո՛չ իմ կառքերով, ո՛չ էլ հեծելազորով* [...]»[46]:

Այսուհանդերձ վարչական տեքստերում **pētḫallu** տերմինը հանդիպում է դեռ Ք. ա. 13-րդ դարում՝ Թուկուլտի–Նինուրտա I (Ք. ա. մոտ 1242–1206 թթ.) արքայի կառավարման ժամանակաշրջանով թվագրվող երկու տեքստում: Դեռ ավելին. տեքստերից առաջինն ունի հստակ թվագրում՝ “18. ITI *Al-la-na-tu* UD.13.KÁM 19. *li-mu* ^{Id}*A-šur*-SUM-DUMU.ÚS” «18. Ալանատու

[43] Տես CAD, P, P. 336:

[44] Հմմտ.՝ *S. Jakob.* Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, P. 212f.:

[45] Տես *Ռ. Դրյուզ,* Նշ. աշխ., էջ 166:

[46] Տես *A. K. Grayson.* Assyrian Rulers of the Third and Second Millennia BC I (1114-859 BC), A.0.100.5:

ամսի 13-րդ օր 19. Աշշուր-նադին-ապլիի անվանադիր տարում (էպոնիմ)»[47]: Աշշուր-նադին-ապլին (Ք.ա. մոտ 1205–1202 թթ.) Թուկուլտի–Նինուրտա I-ի որդին և հաջորդն էր: Հայտնի է, որ նա անվանադրվել է երկու անգամ. առաջինը՝ հոր կառավարման 7-րդ տարում՝ Ք.ա. մոտ 1235 թ.[48], և իր գահակալության տարում՝ Ք.ա. մոտ 1206/1205 թ.[49], սակայն, հավանական է, որ տեքստը վերաբերում է Ք. ա. մոտ 1236/35 թ.: Ինչևէ, տեքստի մեզ հետաքրքրող հատվածը հետևյալն է՝

“3. 7 BAN *i-na GIŠ.<BÁN> TUR 4. a-na ub-ru-te EN.MEŠ URU.DIDLI 5. ša ˹Da-lu-qu ša* ***pe-et-ḫal-li*** *6. pa-ni-šu-nu út-ka-i-la-ni*” «3-6. *Սրանցից 7 sūt (չափման միավոր) գարի (չափված) փոքր չափաբաժնով (sūtu), օտարերկրյա պատվիրակների (?) (և) գյուղապետերի համար, որոնց պատասխանատուն հեծյալ (հեծելազորայի՞ն) Դալուքն էր*»[50]:

Հաջորդ տեքստը “VAT 18007”-ն է, որը թվագրվում է Թուկուլտի–Նինուրտա I-ի կառավարման 21-րդ տարով, կամ Աբի-իլիի անվանադիր տարով՝ Ք. ա. 1221 թ.[51]:

Կարծում ենք, սակայն, որ այս ժամանակաշրջանում **pētḫallu** տերմինը, բովանդակային առումով, ըստ Ս. Յակոբի, հավանաբար համապատասխանում էր Նուզիի տեքստերից հայտնի ***rākib sisê***-ին: Վերջինս, հավանաբար, ունեցել է միայն սուրիանդակային և հետախուզական պարտականություններ: Ամեն դեպքում ռազմական նախանշանակման կազմակերպված հեծելազոր, կարծես, մինչև Ք. ա. 12-րդ դարի վերջը գոյություն չի ունեցել[52]:

[47] Տես *J. N. Postgate*. Middle Assyrian Texts (Nos. 99-101), Cuneiform Texts in the Metropolitan Museum of Art. Vol. I: “Tablets, Cones, and Bricks of the Third and Second Millennia B.C.”. Ed. by Ira Spar. The Metropolitan Museum of Art. New York, 1988, N 99, P. 144:

[48] Տես *Y. Bloch*. Middle Assyrian Lunar Calendar and Chronology. “Living the Lunar Calendar”. Ed. by J. Ben-Dov, W. Horowitz and J. Steele. Oxford, 2012, P. 45; *նույնի՝* The Order of Eponyms in the Reign of Tukultī-Ninurta I. “Orientalia, Nova series”, 2010, Vol. 79, N 1; *H. Freydank*. Zu den Eponymenfolgen des 13. Jahrhunderts v. Chr. in Dur-Katlimmu. “Altorientalische Forschungen”, 2005, Vol. 32, N 1; *W. Röllig*. Eponymen in den mittelassyrischen Dokumenten aus Tall Šēḫ Hamad/Dūr-Katlimmu. “Zeitschrift für Assyriologie”, 2004, N 94; *H. Freydank*. Beiträge zur mittelassyrische Chronologie und Geschichte (SGKAO 21). Berlin, 1991, PP. 42, 44:

[49] Տես *J. Jeffers*. The Nonintercalated Lunar Calendar of the Middle Assyrian Period. “Journal of Cuneiform Studies”, 2017, N 69; *Y. Bloch*. Middle Assyrian Lunar Calendar and Chronology, P. 46:

[50] Տես *J. N. Postgate*. Middle Assyrian Texts (Nos. 99-101), N 99, P. 144; *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, P. 212f.; *H. Freydank*. Texte aus Kār-Tukultī-Ninurta 2. Studies Mesopotamica 2, 2015, N 9:

[51] Տես *Y. Bloch*. Middle Assyrian Lunar Calendar and Chronology, P. 45; *H. Freydank*. Beiträge zur mittelassyrische Chronologie und Geschichte, PP. 43, 62, 105- 106:

[52] Տես *S. Jakob*. Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, P. 212; հմմտ.՝ *Վ. Մայեր,* Նշ. աշխ., էջ 456:

Ակնհայտ է, որ տարածաշրջանի վաղ ժամանակների հեծյալ զինվորները գործել են ավելի շատ որպես արագաշարժ նետաձիգներ, հետախույզներ և (կամ) հետապնդողներ, քան որպես հարվածային ուժ: Զինավառ վիճակում ձիուն սանձելու և կառավարելու տեխնիկական դժվարությունները, ինչպես նաև անհրաժեշտ ասպազենի՝ թամբերի, սանձերի, ճակատակալների առկայությունը, պետք է որ սահմանափակեին վաղ շրջանի հեծելազորային ստորաբաժանումների մարտավարական արդյունավետությունը: Այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ հեծելազորը պետք է որ բաղկացած լիներ ոչ ավելի, քան տասից հիսուն հեծյալներից: Դատելով Նորասորեստանյան ժամանակաշրջանի պատկերագրական տվյալներից (Աշշուրնաձիրպալ II (Ք. ա. 883–859 թթ.) և Շուլմանու-աշարեդ III (Ք. ա. 858–824 թթ.)[53])՝ կարող ենք ենթադրել նաև, որ Միջինասորեստանյան ժամանակաշրջանի ասպազենը պետք է արտացոլեր տվյալ ժամանակաշրջանի տեխնիկական սահմանափակ հնարավորությունները: Հեծյալները կոշտ թամբերի փոխարեն սովորաբար օգտագործում էին պարզ թամբի կտորներ, և բնականաբար՝ ասպանդակների բացակայությունը պետք է սահմանափակեր նրանց արդյունավետությունը մերձամարտում: Հիմնական զենքերի թվում կային կոմպոզիտային (հատվածավոր, բաղադրյալ) աղեղներ, տեգեր և կեռ սրեր, իսկ լանջապանը պատված էր բրոնզե թեփուկավոր թիթեղներով և (կամ) կաշվե պաշտպանիչ վրադիրներով, որոնք մերձամարտում նվազեցնում էին զինվորի խոցելիությունը:

Ասորեստանի տարածքային ընդլայնման աշխարհագրությունը կարևոր դեր պետք է խաղար հեծելազորային զորքերի զարգացման գործում: Տերության ընդլայնումը դեպի հյուսիս, հյուսիս-արևելք ու արևելք, մասնավորապես՝ Զագրոսի և Տավրոսի լեռնաշղթաների լեռնային շրջաններ, ինչպես նաև արևմուտք ու հարավ՝ սիրիական տափաստաններ և Բաբելոնիա, պահանջում էր ռազմական ստորաբաժանումներ, որոնք ունակ էին արդյունավետորեն գործելու տեղանքի տարբեր պայմաններում: Ավանդական մարտակառքային մարտը, չնայած արդյունավետ էր հարթ տեղանքում, պակաս արդյունավետ էր լեռնային կամ խիտ անտառապատ շրջաններում, ինչը, բնականաբար, անհրաժեշտ էր դարձնելու ավելի շարժուն հեծյալ ստորաբաժանումների զարգացումը:

Մարտավարական առումով Միջինասորեստանյան հեծելազորը հիմնականում պետք է գործեր որպես մարտակառքերի և հետևակային կազմավորումների աջակցության զորատեսակ:

գ) *Հետևակը* (**zukû**)[54]. հետևակայինները կազմում էին բանակի մեծա-

[53] Տես *L. W. King.* Bronze Reliefs from the Gates of Shalmaneser. King of Assyria BC 860-825. London, 1915, plates XV, XXXVIII, XLVIII, XLIX; *A. Schachner*. Bilder eines Weltreichs, Kunst- und Kulturhistorische Untersuchungen zu den Verzierungen eines Tores in Balawat (Imgur-Enlil) aus der Zeit von Salamanassar III., Subartu XX. Turnhout, 2007, PP. 91, 151:

[54] Հմմտ.՝ *T. Dezsò*. The Assyrian Army I: The Structure of the Neo-Assyrian Army, 1: Infantry, PP. 57, 66f.; CAD, Z, P. 153f.:

մասնությունը, լինում էին ծանրազեն և թեթևազեն: Թեթևազեն (***kallāpu***)[55] հետևակը օգտագործվում էր արագ ծավալման և հարձակման համար:

դ) *Նետաձիգները* (**māru damqu**)[56]. հեռահար մարտի մասնագիտացված զորքեր, որոնց ստորաբաժանումները ասորեստանյան մարտավարության առանցքային բաղադրիչն էին:

ե) *Պաշարման մասնագետները* (**ṣāb pilši**)[57]. պաշարողական մարտեր մղելու համար պատրաստված մասնագետներ: Ամրացված քաղաքների գրավման նպատակով ստեղծվեցին պաշարման համար նախատեսված մասնագիտացված զորքեր[58]:

3.5. **Նորակոչիկների** (**ša nēpeše**)[59] **հավաքագրում կամ զորակոչ**

Խոշոր ռազմարշավների ժամանակ մշտական բանակը համալրվում էր ժամանակավոր ծառայության անցած զինվորներով, որոնք կոչվում էին՝ **ṣāb ilki**: Այս մարտիկները ռազմական ուժերի ողնաշարն էին, և ծառայության դիմաց նրանց տրամադրվում էին հողատարածքներ (*ilku*-հող): Փաստացի, այս *ilku*-զինվորները պարտավորվում էին հողակտոր ստանալու դիմաց կատարել զինվորական ծառայություն: Այսպիսով ստեղծվում էր մի համակարգ, որը զինվորական ծառայությունը կապում էր տնտեսական կառավարման հետ: Նահանգապետերից պահանջվում էր զինվորական ծառայության համար տղամարդկանց որոշակի չափաբաժիններ տրամադրել՝ ըստ բնակչության խտության և ռեսուրսների: Զորակոչված զինվորները, սովորաբար, ծառայում էին սեզոնային ռեժիմով, հատկապես ամառային ամիսներին, երբ դաշտային աշխատանքների պահանջն ավելի քիչ էր, իսկ ցանքսի և բերքահավաքի ժամանակ վերադառնում էին իրենց գյուղատնտեսական հոգսերին: Զորակոչը կազմակերպվում էր ըստ տարածքային շրջանների, և հավաքագրվածները փաստացի ծառայության էին անցնում սահմանափակ ժամկետներով[60]: Այս համակարգը, որը հաստատված է Դուր-Կուտլիմմուի և այլ նահանգային կենտրոնների տեքստերում, պետությանը հնարավորություն էր տալիս պարզևատրելու ծառայության դիմաց՝ չսպառելով զանձապետական ռեսուրսները և, միաժամանակ, պահպանելու հողի բաշխման վերահսկողությունը:

---

[55] Տես CAD, K, P. 78:

[56] Հմմտ.՝ *T. Dezsò*. The Assyrian Army I: The Structure of the Neo-Assyrian Army, 1: Infantry, PP. 164, 169ff.:

[57] Տես CAD, P, P. 378ff.:

[58] Տես *Վ. Մայեր,* Նշ. աշխ., էջ 466ff.:

[59] Տես *S. Jakob.* Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, P. 216f.:

[60] Տես *J. N. Postgate*. Bronze Age Bureaucracy: Writing and the Practice of Government in Assyria, PP. 21ff., 159, 260, 268, 339; *Ս. Ք. Մելվիլ,* Նշ. աշխ., էջ 71:

Եզրակացություն

Միջինասորեստանյան ժամանակաշրջանը ներկայացնում է հնագույն ռազմական կազմակերպության զարգացման կարևորագույն, և միևնույն ժամանակ՝ անցումային փուլ: Այս ժամանակաշրջանի նորամուծությունները, ներառյալ՝ արհեստավարժ բանակը, մասնագիտացված զորատեսակները, օտարերկրյա զորամիավորումների ընդգրկումը և ավելի կենտրոնացված հրամանատարական կառուցվածքը, հիմք դրեցին ավելի արդյունավետ Նորասորեստանյան ռազմական մեքենային: Արհեստավարժ բանակին անցումը՝ զուգորդված մասնագիտացված ստորաբաժանումների զարգացման և ավելի բարդ նյութատեխնիկական ապահովման հետ, ստեղծեց մի ռազմական համակարգ, որն ի վիճակի էր ձեռնարկելու աննախադեպ հեռավորությունների վրա արշավանքներ և անգամ ցուցաբերելու նյութատեխնիկական աջակցություն:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

СТРУКТУРА АССИРИЙСКОЙ АРМИИ В СРЕДНЕАССИРИЙСКИЙ ПЕРИОД

Р. А. ЦАКАНЯН, кандидат исторических наук, научный сотрудник Института востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Среднеассирийский (ок. 1416–935 гг. до н. э.) период в истории Ассирии был определяющим в военной истории Древнего Ближнего Востока. После распада Древнеассирийского «*торгово-сетевого*» государства Ассирия погрузилась в период социальной и политической раздробленности, из которого вышла только в Среднеассирийский период. Благодаря своей замечательной военной организации и тактике в этот период Ассирия превратилась из *города-государства* в *территориальное*, а затем и *региональное* государство. В этот период она осуществила значительную территориальную экспансию. Проблемы сохранения и защиты этих расширенных территорий привели к инновациям в военной организации и управлении. Все это подразумевало формирование профессиональной, хорошо организованной армии, способной осуществлять как завоевательные походы, так и оборонительные действия. Развитие военной терминологии в этот период отражает переходный этап в формировании ассирийской армии.

Среднеассирийская держава представляла собой решающий и в то же время переходный этап в развитии древней военной организации. Инновации этого периода, включая профессиональную армию, специализированные подразделения, привлечение иностранных войск

и более централизованную структуру командования, заложили основу для более эффективной Новоассирийской военной машины. Переход к профессиональной армии в сочетании с развитием специализированных подразделений и внедрением более совершенной системы снабжения создал военную организацию, способную проводить кампании на беспрецедентных расстояниях и даже оказывать материально-техническую поддержку.

MILITARY HISTORY

THE STRUCTURE OF THE ASSYRIAN ARMY IN THE MIDDLE ASSYRIAN PERIOD

R. A. TSAKANYAN, PhD in History, Research Fellow, Institute of Oriental Studies, NAS, RA

SUMMARY

The Middle Assyrian period (c. 1416–935 BC) in the history of Assyria was a decisive epoch in the military history of the Ancient Near East. Following the collapse of the Old Assyrian "trading network" state, Assyria entered a stage of social and political fragmentation from which it recovered only in the Middle Assyrian period. Owing to its remarkable military organization and tactics, during this period Assyria transformed itself from a *city-state* into a *territorial* and then a *regional* state. During this period it underwent significant territorial expansion. The challenges of maintaining and defending these expanded territories led to innovations in military organization and administration. All of this implied the formation of a professional, well-organized army capable of waging both invasion campaigns and defensive actions. The development of military terminology during this period reflects the transitional stage in the formation of the Assyrian army.

The Middle Assyrian Empire represents a decisive and at the same time transitional stage in the development of ancient military organization. The innovations of this period, including the professional army, specialized units, the use of foreign troops, and a more centralized command structure, laid the foundation for the more effective Neo-Assyrian military machine. The transition to a professional army, combined with the development of specialized units and implementation of a more sophisticated logistics, created a military system capable of conducting campaigns over unprecedented distances and even providing logistical support.